ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0077, Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 26

«25» հուլիսի 2012թ.

ՀՂ-1320

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ
պրն Դ. ՍԱՐԳՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սարգսյան,

Ի պատասխան Ձեր 2012 թվականի հուլիսի 13-ի թիվ 02/12.10/9772-12 գրության, հայտնում ենք, որ «ՀՀ կառավարության և Նոր Զելանդիայի կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի կնքման առաջարկությանը համաձայնություն տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ սկզբունքային դիտողություններ և առաջարկություններ չունենք:

Միաժամանակ Ձեզ ենք ուղարկում «ՀՀ կառավարության և Նոր Զելանդիայի կառավարության միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի նախագծի վերաբերյալ ՀՀ Նախագահի աշխատակազմի փորձագիտական-վերլուծական վարչության եզրակացությունը:

Առդիր՝ 1 թերթ:

Հարգանքով՝

Վ. ՍԱՐԳՍՅԱՆ

010-19413
26 07 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱՅԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՓՈԽԱԴԱՐՁ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«ՀՀ կառավարության և Նոր Զելանդիայի կառավարության (այսուհետ՝ Պայմանավորվող Կողմեր) միջև ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին» համաձայնագրի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հայտնում ենք հետևյալ նկատառումը.

Առաջարկում ենք հանել Նախագծի 5-րդ հոդվածի 4-րդ մասը՝ ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության կողմից նախկինում կնքված ներդրումների խրախուսման և փոխադարձ պաշտպանության մասին տիպային համաձայնագրերում նման դրույթ առկա չէ:

Իսկ եթե խոսքը վերաբերվում է պայմանավորվող կողմերից որևիցե մեկի օրենսդրության փոփոխության արդյունքում մյուս կողմի ներդրողներին հնարավոր կորուստներից և վնասներից ապահովագրելու անհրաժեշտությանը, ապա առաջարկում ենք քննարկել «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով սահմանված դրույթը համաձայնագրում նախատեսելու նպատակահարմարությունը, այն է. «պայմանավորվող կողմի՝ օտարերկրյա ներդրումները կարգավորող օրենսդրության փոփոխության դեպքում ներդրման պահից սկսած 5 տարվա ընթացքում, մյուս պայմանավորվող կողմի ներդրողի ցանկությամբ, կիրառվում է ներդրումների իրականացման պահին գործող օրենսդրությունը»:

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ-ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

21.07.2012թ.

Կատարող Կ. Մուխսյան